ՀՏԴ 891.981

# ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ՔՆՆԱՀԱՄԱԿԱՐԳԸ

*Զ.Վ.Բալայան*
գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Ներքին ականածանքն ու հպարտությունը, մեծագույն հարգանքը, մասնագիտական զմայլանքն ու խոնարհումը մեզ մի կողմից սաստեցնում են թույլ չեն տալիս խոսել քո ժամանակակցի, մեծագույն գիտնական-գրականագետի, գրականության պատմաբանի, քննադատ-տեսաբանի, հայ գրականության տաղանդավոր մեթոդաբանի, դարի մեծագույն մտավորականի, մեծագույն արցախցու, հայրենասեր ուսուցչի, ուսուցչապետի րաբունապետի մասին, մյուս կողմից էլ՝ պարտադրում են...

Սակայն այդ պարտադրանքը հարկադրանք չէ, այլ՝ առիթ, գեղեցիկ առիթ՝ տողերիս հեղինակին գնահատանքի, երախտիքի, շնորհակալության, շնորհավորանքի խոսք մատուցելու ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իմ ու իմ նման շատ-շատերի ուսուցիչ, ասպիրանտական ղեկավար Սերգեյ Ներսեսի Սարինյանի իմաստալից, վսեմաշուք 80-ամյա հոբելյանի առթիվ...՝ ձեռքս սրտիս...՝ խոնարհումով..

Այդ պարադոքսալ պարտադրանքը գրականության մարդու համար՝ ներքին հաճելիություն է ծնում մի քանի խորհուրդներով՝ մարդկային, ինտելեկտուալ, մասնագիտական, հայրենասիրական, որոնք բարձր որակների ցույց կարող են հանդիսանալ...

Ս. Սարինյան երևույթը խիզախել, խիզախում է գիտականության բերել գրականության որոշակի ընդհանրություն. երբեմնակի սինխրոն (համաժամանակյա) արժեքներ, համոզմունքներ, ուղղություններ՝ գրական ժանրերի տարբերակումների, պարբերացումների, կատեգորիաների հետ, անտիկ ժամանակներից ցուցված պոետիկական սկզբունքների արժեքավորմամբ ու հաստատմամբ, և ոչ միայն, այսինքն՝ գրական-գեղարվեստական, տեսական, գաղափարաբանական, քննական մտածողության շերտերը գիտականացնել, իսկ դրանք, առավելությամբ, այս կարգի ընդհանրացումներով՝ բացառիկ ընդհանրացումներով են հնչում՝ տիպաբանություն, էթիկա, պատմության փիլիսոփայություն, մեթոդաբանություն, գաղափարաբանություն, գրական քննադատություն, գրականության փիլիսոփայություն...

Ի՞նչ հարաբերություններ գոյություն ունեն գիտնականի, հասարակական էակի, մանկավարժի, տեսաբան-մանկավարժի, գրականության պատմաբանի միջև և այլն... քննախոսնիկա՝ մեր ժամանակաշրջանի և ժամանակի, ժամանակակցի ներքին ու արտաքին աշխարհների դրսևորումների լույսի տակ և այլն, և այլն...

Ս. Սարինյանը բարդ ու խորը անհատականություն է, բնավորությամբ, խառնվածքով՝ սկեպտիկ..., հակումներով՝ խիզախող, մտասևեռմամբ՝ հեղափոխական...

Հավանական է՝ նրան կարելի է ներկայացնել որպես անտիկյան ժամանակաշրջանի Պլատոնի ակադեմիայի՝ Ձիթենյաց այգու, սկեպտիկ իմաստասեր, քերթողական ոգով և պոետիկական խառնվածքի տաղանդի ձույլքով նախատեղծ... Կարելի է համադրել նրան ներքին հախուռն խառնվածքով և արտաքին խաբուսիկ սառը տրամախոսությամբ կերպարի... Սակայն, հայենք, թե ներքին այդ սառնության մասին, դարաշրջանն ի նկատի ունենալով ինչի է տրամախոսվում Բելինսկին. «Այդ սառնությունը ներքին հիացմունքի կենտրոնացումն է, արգասիքը ինքնատիրապետման, որ կարողանում է տեսնել ամեն ինչի իսկական տեղը և իսկական սահմանները»[1]:

Ս. Սարինյանը հենց այդպիսի առավելության կրողն է, ինչպես ցուցեցինք՝ սկեպտիկ մտասևեռմամբ, բանի, էության, էախոսության, գիտականության, յուր բանականության ուժի ցուցադրական դասերով՝ անժխտելիորեն՝ կործանիչ տրամաբանությամբ, այն է՝ հերքումի-եղծումի անողոք, անկասելի ուժով առլեցուն ու թրծված, թեև նման դեպքում է, որ կարելի է նրա հետ համաձայնվել անվիճելիորեն. «... բանավեճում ինձ հաղթող չի եղել...», և այս ամենը գաղափարի, գաղափարակարգի, գաղափարախոսության սկզբունքով՝ ծարավի հոգեզննումով, հոգեբանությամբ, որտեղ սառը բացասում չկա, այլ կա գիտության մեջ խորանալու անհագ նկրտում, ի հաստատումն՝ մղվեք նրա՝ ազգային գաղափարախոսության շուրջ ցուցված անալոգիաներին, հիպոթեզներին. «...Համահարթվեց հասարակությունը, բոլորը դարձան ազատ և իրավահավասար... Ազատություն և հավասարություն նշանաբանով սկսվեց բանական հասարակության նոր՝ դեմոկրատական դարաշրջանը: Այստեղ է չարիքի հիմքը՝ անհատի և հասարակության անտինոմիան, որ ընդունակ չեղան վերացնելու ոչ կապիտալիզմը, ոչ սոցիալիզմը, ոչ ամերիկանիզմը... դրանք այժմ արդեն, վերածել են ծաղրանկարի, ուր ներկայացում է խաղում պառլամենտ կոչված կրկեսը: Եվ այդ ատավիզմի

համաշխարհային քաղաքականության մակարդակներում այժմ դարձել է բռնության օրինականացման, ազգերի և մարդկության ազատությունը խափանող և բարոյական ու ազգային այլանդակություններ արդարացնող միջոց...»[2]:

Հարկավ, անալոգիայի և սիլլոգիզմի այլամիտ դրսևորումներով քննադատը գծում և ներկայացնում է յուր ապացուցման թեզիսը... ցուցնելով հասարակական շերտերի անկարգունակ կարգը:

Սարինյանի ներքին սկեպտիցիզմը գիտական հիպոթեզաձևույթներում ազդարարում և հայտարարում է ճշմարտություններ՝ կապված գրականության պատմությանը, պոեզիայի հարցերին, տեսական մեկնությունների սկզբունքների, գրական ուղղությունների, հոսանքների ցուցմանը, մեկնաբանմանը, արժեքաբանմանը...

Մտքի ինչպիսի սահմանադրումներ, սահմանախախտումներ, որպիսի ամբողջացումներ, ահավասիկ՝ իմաստասեր՝ Պլատոնի ակադեմիայից...

Հետաքրքիր և հավանական է որոնել (թեկուզ այն անչափ դժվար) ոճակաների հակադրույթը, նախադրույթն ու եզրահանգումը, մտահանգման ինքնատիպ՝ սիլլոգիզմի և այլ մտակերպերի կատեգորիկ դրսևորումները, ճշմարիտ դրսևորումները...

Այս դիտույթով, հավանականությամբ պետք է մեր ժամանակին ևս սկեպտիցիզմի որակում տալ, քանզի անցման շրջանին հատուկ ուրվագծումներ է կատարում նա յուր ճշմարտության չբավարարված ձգտումներով, ծարավի հոգեբանությամբ, քաղցի, ճշմարտության քաղցի ընդգծված զգացողությամբ... Հարկ է չշփոթվել և չերկնչել, չնմանալ, որովհետև սկեպտիցիզմը՝ չմարսված սկեպտիցիզմը, յուր բնույթի այլ որակներ էլ է ներկայացնում...

Ահավասիկ, Սարինյանը ակադեմիական ոճով, սևեռուն, որոնող, մարտնչող, սկեպտիկ էություն ունի, նրա միտքը սուր է, միշտ ոգում է, զրուցում է լայն կտրվածքներով, առնչվում է սկզբունքներ, գիտության ծարավ հոգին գիտական սխրանքներ է կատարել, կատարում՝ փորձելով յուր հաստատած ճշմարտությունները, գիտական ճշմարտությունները ցուցել ու երբեմնակի՝ տարակուսել ժամանակաշրջանի անբարեհաճությունից, գրական-գրականագիտական շարժերի ընթացքից, պահվածքից, հին ու նոր ավանդների բախումից ու... դրանց խաչաձևումից՝ չմնալով պասիվ հայեցող, այլ երևալով յուր հեղափոխական մտածելակերպով, առաջնամարտիկի քննախույզ, հաստատող վարքագրությամբ...

Նա որոշակի, պարտադիր սկզբունքներ ունի մշակած. «Գրականության պատմաբանը,- խոսքը առաջին հերթին յուր մասին է նաև,- չի կարող, իրավունք չունի զանցել գրական պրոցեսը: Նրա համար բոլոր անունները ու օղակները հավասարարժեք են (ոչ հավասար): Կա գրական երևույթների գնահատության երկու եղանակ՝ ակսիոլոգիական (արժեքաբանական) և հերմենևտիկ (հաղորդակցական-մեկնաբանական): Գրականության պատմաբանը չի կարող ղեկավարվել միայն արժեքաբանական եղանակով, դա կզրկի պատմությունը իր ներքին հարստությունից, գրական պրոցեսի բարդ ու բազմաշերտ դրսևորումների անհրաժեշտությունից: Երկու եղանակների միասնությունը պարտադիր է»[3],- եզրահանգում է քննադատը:

Գրականության պատմաբան լինելով նաև ընտրյալ է Սարինյանը, գրականության տեսաբան՝ անգերազանց, հարցը սկզբունքային նշանակություն է ընդունում, միաժամանակ, երբ փորձում ենք դիտել նրա մեկնողական ծիրը՝ նյութին առնչվելիս... «Մտքի ինչպիսի տիրապետող անկաշկանդություն, տեսակների ինչպիսի որոշակիություն, հայացքների, ըմբռնումների ինչպիսի ավարտվածություն, որոնք արտակարգ գեղեցկություն են ստանում ճկուն ու դինամիկ տրամաբանական անցումներով, հասկացությունների պատմական տևողության խոր ըմբռնողությամբ, փիլիսոփայական կատեգորիաների պատճառակցված ենթակարգությամբ...»[4],- մեկնությունը «մաքուր քննադատի տիպ» (Րաֆֆի) հանդիսացող Մ. Նալբանդյան մտածողի բնագիտության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, միֆոլոգիայի, քաղաքականության, քննադատական ռեալիզմի դրսևորումների և գիտական, պոետիկայի ու այլ համակարգերի, տրակտատների բնությանը վերաբերող քննամտահանգումներ են՝ ...տրված մեծ մտածողի՝ Սարինյանի կողմից...

«Յուրաքանչյուր իմաստասեր, գրող, գիտնական, թե փիլիսոփա, գրում է միայն մեկ գիրք՝ իր կյանքի գիրքը: Դա նրա կենտրոնն է, մտքի կիզակետը, դեպի որը ձգտում և որից ելնում են նրա բոլոր գյուտերն ու գրքերը: «Հայ գաղափարաբանությունը» իմ կյանքի գիրքն է և նրանում առկա է իմ գիտական գործունեության տասնամյակների փորձը: Ուշադիր լինելու պարագայում կարելի է նկատել, որ գաղափարը մի էական մոտիվ է գծում իմ գրքեր բոլոր ուսումնասիրություններում»,-գրում է Սարինյանը ներքին կենտրոնացում՝ ստեղծում, գաղափարների սիստեմավորում ապրելով: Թերևս 1950-ական թվականները լցված, ներծծված էին Սարինյան քննադատով: Դպրոց նախանշած ու հիմնադրած երևույթներից է Ս.

Սարինյանը... Հայ գրականության վաղվա օրվա շուրջ մտորման գնալով տեսաբանը դիտում է. «Նկատում եմ, որ քսանմեկերորդ դարի նախաշեմին հայ գրականությունը համընթաց լինելու համաշխարհային գրականությանը.. Ինտելեկտուալ ներհոսք է կատարվում մեր մտավոր աշխարհը Ջոյսը, Շոպենհաուեր, Նիցշե, Հեյդեգեր, Շպենգլեր, Յասպերս, Շնիցլեր, Սարտր...»[5]:

Սրանցից շատերը մեծ փիլիսոփաներ են, մեծ արվեստագետներ, և զուր չէ, որ Ս. Սարինյանը յուր գրքերի գիրք՝ «Հայ գաղափարաբանությունը», քննաանալիզի, սահմանման դնելով տալիս է արժեքաբանումն հետևյալ կերպ (այն կարելի է նրա ողջ քննահամակարգի գնահատությանը ուղղել). «Դա մի ուրույն սինթեզ է, որ արտածում է մտավոր գործունեության բոլոր ոլորտների ձգտումը փիլիսոփայական ընդհանրացման՝ այդ ընդհանրացման մեջ անդրադարձնելով թե՛ սոցիոլոգիայի, թե՛ փիլիսոփայության, թե՛ տնտեսագիտության, թե՛ մանկավարժության, թե՛ գրականության ու արվեստի, թե՛ հասարակական մտքի գիտակցման փորձը»[6]:

Այստեղ թե՛ ապացուցման թեզիսը, թե՛ պարադոքսները, թե՛ ցուցվող սիլլոգիզմները, թե՛ նախադրյալ-հիպոթեզները՝ նոր և նոր առաջադրվող, թե՛ տրամաբանման այլաշերտ երանգները ձգտում են մեր մեծ ժամանակակցի մտաքննահամակարգի սահմանները գծել և ցուցել...՝ լուրջ, բարդ ու հաճախ՝ անմեկնելի..., անպարփակ, խելայական. դինամիկ:

Սակայն դեռևս ազգային հայենք՝ ինչ գրաքննական-տեսական արժեքներ կստեղծի նրա ծանր լրջություն ունեցող ոգեղեն ժայթքումներ ու դեռևս ստացվելիքը...՝ քննական ձևույթներ նախանշող միտքը...

Իսկ ստեղծվածները անչափ լուրջ ու արժեքավոր, ժանրային տարաբնույթ սիստեմով աշխատասիրություններ են՝ «Ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» (1955) թեկնածուական ատենախոսություն, «Հայկական ռոմանիզմ» (1966), «Րաֆֆի» (1957), «Մուրացան», «Վ.Տերյանի դիմանկարը», «Լեոն Շանթ» (1991), «Հայ նոր գրականության պատմություն» (հինգ հատորյակ՝ Սարինյանի խմբագրությամբ), «Հայ քննադատության պատմություն» (երկու հատոր՝ Սարինյանի խմբագրությամբ), «Հայ վեպի պատմություն», «Սերունդներ և ավանդներ», մոնումենտալ, անչափական «Հայոց գրականության երկու դարը» (չորս հատորով) գրքերը և այլն, և այլն...

Ս. Սարինյանը գեղարվեստի էությունը մեկնելով յուր ներքին զարգացման կոնտեքստերում, քննելով գեղարվեստական երկի արժեքավորման, ստեղծագործության աստիճանի պարզաբանման հարցերը՝ դիտում և մտահանգում է հետևյալին, թե գեղարվեստի՝ «ճանաչման ընթացքը հենց շարժման օրենքի և օրինաչափության իմացություն է, առարկայի բազմակի պատճառական կապերի իմացությունը, որից և գոյանում»:

Քննադատը գեղարվեստական երկի ներքին թուլությունը համարում է այն, թե վերջինս զուրկ է էներգիայի ներքին մեծությունից՝ «իմացական, հոգեբանական և զգացական հարստությունից»: Սարինյանը նրա կայացման մեթոդոլոգիան, գոյութենությունը անվանում է «երևույթների փիլիսոփայական բարձր համադրություն»՝ հաստատման գնալով, ուսուցանելով, թե «գրողի տաղանդը չափվում է հենց այդ էներգիայի հարստությամբ, որը և որոշում է երկի գեղարվեստական համարժեքի ժամանակային միավորը»:

Սարինյանը հատկապես չժխտելով նյութի սեփական առաջադրանքի իմացությունը, պարտադրանքը՝ գնահատելի է գտնում, որ «գրողը պետք է զինված լինի նրա ներքին օրենքների խոր իմացությամբ» (էջ 555), այսինքն՝ կռահելի տեսանի նյութի ներքին գաղափարայնությունը իր իսկ առաջադրանքի գծույթներում..., շարժերում:

Նյութի, երևույթի փիլիսոփայական բևեռացումները բեկվում են անվերջանելիության սիլլոգիզմներում, մտքի բազիսում՝ լինեն դրանք սկզբունքների, ուղղությունների, մեկնությունների, զգացումների, աշխարհընկալումների խորքային, երկբևեռ ցույցերում, իսկ տեսաբանը շեշտում է. «Առհասարակ, լուսնի տակ և տիեզերքում չկա մի երևույթ, որն ունենա իր հստակ, վերջավորված սահմանումը: Բոլոր սահմանումները ձգտում են մոտավորության: Դա նյութի բնույթն է, նրա անսպառելիությունն ու անվերջությունը...»:

Մերթ-մերթ գրաքննադատը անդրադառնալով արդի հայ գրականության ընթացքին, սերնդափոխության հատույթներին, գեղարվեստական մտածողության, ոճի, աշխարհընկալման հարցերին՝ նկատում է. «Այժմ տեղի է ունենում մի յուրատեսակ հեղափոխություն մեր գեղարվեստական մտածողության մեջ, որն, անշուշտ, առնչվում է մեր ազգային ոգու հեղափոխական վերելքի հետ, քաղաքական իմաստով մեր անկախ պետականության և Ղարաբաղի ազատագրական շարժման հետ»: Գրաքննադատը երևույթը գնահատության է ենթարկում՝ մեկնելով հայ գրականության կարճ, իրար հարակից ընթացքի՝ արդի ժամանակաշրջանի և նրան նախորդած տարիների գրական ձեռքբերումները. «Ինչ համեմատություն արդի մեր մամուլի մտավոր բովանդակության և նախորդ տասնամյակների

ավերեսային, զուտ թվաբանական ճշմարտություններով կաղապարված գաղափարական անկատանտիզմի միջև»: Գրականության պատմաբանը այնուհետև հատակեցված մատահանգում է, ներկայացնում՝ արդի հայ գրականության զարգացածության, առաջ մղվելիք ինքնադրսևորումների շուրջ վավերագրում ցուցելով. «Մտավոր, գեղարվեստական և խտելեկտուալ արժեքների հավասար ներհոսքը փոխակերպում է մեր ազգային աշխարհայացքի ձևն ու բովանդակությունը՝ արվեստի և գրականության որոնումներն ուղղելով համաշխարհային չափանիշների յուրացմանը...»[8]: Գրական արդի պրոցեսը իր իսկ ժանրային տարաբնույթ դրսևորումներով, ըստ գրականագետի, արդեն այլ բարձր որակում ունի. «Գրականությունը նվաճում է պրոֆեսիոնալ մակարդակ: Սա նշանակալից առաջընթաց է»,- եզրահանգում է Սարինյանը:

«Ես բոլորովին այն կարծիքին չեմ, թե արդի գրական պրոցեսը ճգնաժամ է ապրում»,- յուր պնդումը հիմքումի ձևույթով է գծում Սարինյանը՝ նորից պնդումի գնալով, թե «գրականությունը նվաճում է պրոֆեսիոնալ մակարդակ»[9]:

Գրաքննադատության մեթոդիկայի, մեթոդաբանության հարցադրումները, քննաձևույթները ուսուցողական համակարգում առաջնային են դառնում թե՛ քննադատության դերին, թե՛ քննադատության պրոցեսին, թե՛ քննադատի անաչառությանը, թե՛ նրա քաղաքացիական ազնվությանն ու ակտիվությանը, թե՛ անընդմեջ ստեղծվող երկերի գնահատությանը վերաբերող հարցադրումները, քննաձևույթները իրենց հնարավոր դրսևորումներով. «Գրական քննադատության կոչումն է՝ վերլուծել ընթացիկ գրական երևույթները, գրախոսել լույս տեսնող գրքերը, տալ գրական երկի գնահատականը, համակարգել գեղարվեստական փորձը և ուղղություն տալ գրական շարժմանը»[10]:

Գրաքննադատը ցույց է տալիս գրականագետի առջև ծառացած խնդիրը ու դրան հասնելու մեթոդիկան՝ հաշվառնելով գիտական նյութի կարևորությունը, ժանրային տարբերակումը, նյութի ուսուցողական կողմը: Առաջնակարգ արժեքով է ներկայացնում հատկապես Հ. Օշականի և Ս. Աղաբաբյանի գիտական փաստակները, որոնք գրական պրոցեսից չեն հանում ոչ մի անուն...

Գրական երևույթների բացահայտման, սահմանման, համապատասխան գիտական տերմինաբանություն ստեղծելու, ուսուցանելու կարևոր, անդրանիկ նախապայմանը Սարինյանը համարում է առաջին հերթին այն արժեքավորումը, որը կգուցի գրականագիտական ուղղության ձևույթը. արդյո՞ք այն ռեալիզմի, ռոմանտիզմի, կլասիցիզմի, սիմվոլիզմի, թե՞ էլի գրական որ ուղղության սահմանումը, խմբումը կեղի... «Յուրաքանչյուր տերմին, յուրաքանչյուր եզր կամ հասկացություն իր մեջ մարդկային մտածողության հարյուրամյակների փորձ է ամփոփում... Ինչ ուզում ես ասա, ինչպես ուզում ես բացատրիր երևույթը, մինչև չասես ռեալիզմ, ռոմանտիզմ, սիմվոլիզմ և այլն, մինչև չբանաձևես սահմանումը, այն կմնա չգիտակցված, չըմբռնված վերացություն»[11]:

Արդի հայ քննադատական մտքի պատմության ընթացքը նախանշված է մեթոդաբանության ինքնատիպ ցոլանքների առանձնացումներով, որում Սարինյանի ներկայացրած համակարգը հաճախ ժանրային նոր տերմինոլոգիա է նախանշում, ինչպիսին է տեսությունը:

Ըստ Սարինյանի տեսության՝ «ժանրը» մեր գրականագիտության մեջ նորույթ է. «գոնե ես այլ օրինակ չեմ հիշում»,- եզրահանգում է քննադատը:

Որպես մեթոդաբանական ուղեցույցներ՝ հայ քննադատության պատմության առարկայի ուսուցման ընթացքում բուհական, լավագույն արժեքավորումներ են դիտվում Սարինյանական մտքի տեսաքննական ստեղծումները, որպիսիք են՝ «Հայ գրականության պատմագրության ուրվագիծ», «Հայկական ռոմանտիզմի տիպաբանությունը», «Հայ քննադատության ներածություն», «Քննադատությունը գրականության պատմության ուղիներում», «Հայ գաղափարաբանություն», «Գրականության փիլիսոփայությունը» և, հարկավ, նրա անպարփակ միտքը դեռևս ստեղծումներ կառաջադրի այս ժանրում...

Լայն է Սարինյանի ներկայացրած մեթոդիկայի գիտական ուղղվածությունը և ուսուցման հնարավորությունը՝ իր բարդ կառույցով հանդերձ, առաջադրած հարցերի ցուցմամբ՝ օգտակար գործողության գործակցի արդյունքով, որը միայն գրաքննադատի գիտապարատի առանձնահատկությունն է հատկանշում...

Ուսուցվող նյութը բարձր է իր ներկայացրած շրջանակներում և լայն՝ հագեցագրված մասսայի ընկալքում... Այդ մասսան թե՛ ավագ դպրոցը, թե՛ բուհը, թե՛ գիտական օջախները, թե՛ գրական դպրոցների ներկայացուցիչները, թե՛ գրականագետ-բանասերներն ու մեկնողներն են ներկայացնում ընթերցող գրական տարրը...

Արժևորելով գրական քննադատության դերը՝ Սարինյանը հաստատում է, թե գրականության տեսադաշտում եղած «քաղդությունը տարրալուծելուն է կոչված գրական քննադատությունը՝ համակարգելու գրական շարժումը արժեքաբանական չափանիշներով և

կազմավորելու հասարակության գեղարվեստական ճաշակ ընդհանրացրության և տառանց զուգահեռ ու հարաբերական կախման մեջ: Այսպես՝ անընդհատ և անվերջ»[12]:

Սարինյանի քննահամակարգում նպատակաուղղված ու ուսուցողական. արժեքավորված գիտակերպ է մեթոդաբանությունը, մեթոդոլոգիան, այն ելակետային ու առաջնահերթ ընդունելը, համապատասխան երևույթի տեսական-քննական ու, հատկապես, նրա՝ գրական ուղղությունների, դպրոցների համակարգման, մեթոդացուցման գիտականությունը հաստատելը, առարկայի սահմանմանը նպատակաուղղվելը, որն ավելի կայուն է դարձնում գրականագիտության, քննադատության բարդ խնդիրները վերհանելու, ուսուցանելու ու համապատասխան կարգում ներկայացնելու ընթացքը...

Ս. Սարինյանի քննահամակարգի հաղթաթափակը՝ «Հայ գաղափարաբանությունը», հայ ժողովրդի յինելության, գաղափարաբանության ոսկեգեղմն է, ինքնահայեցման հայելին ու ինքնամաքրման բուժարանը, բարոյական արժեքների վերստուգարանը, ազգային քննումների ճամփացավակիցը, էպիկայի, գեղարվեստականության, փիլիսոփայության, քննադատության, պոետիկայի, քաղաքագիտության, դիպլոմատիայի, մշակույթի և այլ ու այլ արժեխորումների հզոր ու անկրկնելի փարքամատյանը, որի թերթոնները կարծես մի ամբողջ ժողովրդի գիտակցական ու ստեղծագործական կյանքի ձեռքբերումների և կորուստների, հաղթությունների և պարտությունների անմահ վկայագիրներն են... Կարծես այն վարքագրվել է հայ ազգային ինքնագիտակցության, չնչի բանացուցման թրթիռներից...

Ծերևս, «Նարեկը»՝ տիեզերքի ու երկրի բանականության հաղթահանդեսներից մեկը, որպես համամարդկային նուսի գիտական հզոր արժեք է ցուցվում, իսկ ազգային շրջանակներում ազգային գաղափարաբանության կշռանժարներին խոնարհ և արժանավայել պետք է տեղավորել «Հայ գաղափարաբանությունը»: Դա ոչ միայն գրականության պատմաբանի՝ Ս. Սարինյանի, այլև այսու՝ հայ իմաստաբան ժողովրդի կյանքի անքեկանելի ընդհանրական է..., նրա խտացյալ աշխարհընկալումը, ինքնարնկալումը, տիեզերաընկալումը, ազգայինի ոգեղեն էպիկականությունը, գիտակցությունների ու սթափությունների ընդունարանը, դեպ որի մաքրման ճանապարհի մուտքն է՝ արժեմատյանը՝ պատմականի, գրականի, փիլիսոփայականի, նաև այլևայլ կառույցների, տարատեսակ -իզմերի, հասկացությունների, տեսական ըմբռնումների, գիտական սահմանումների մեկնարանը: Գուցե թե այդպե՞ս են պարփել պատմահայր Խորենացու անմահ «Պատմություն հայոց»-ը, տիեզերազննա կատարյալամերձ Նարեկացու մատյանը, Արցախաթառ Աբովյանի հարամրմուռ «Վերքը», ազգային մեծանուն արժեքներից շատերը...

Անտարակուսելիորեն, իհարկե, հանդգնություն է փորձել մանել Ս. Սարինյանի քննահամակարգի սահմանները, որոնք չեն տեղավորվում մտքի ոչ մի կառույցում և չեն թույլատրում այնտեղ ազատ երթևեկության, թեկուզ այն պատճառով, որ դրանք ամենուրեք (անսահմանի) բնույթ ունեն և ալիքվում են անթվարկելի հարցադրումներով, անհերքելի ապացույցներով, անգնահատելի սինթեզների մեկնությամբ, անհաշվելի ու անմեկնելի բարդ տերմինոլոգիայով (հայրենական և օտար բառախմբերի), նրա մեկնությունների հարուցած սրությամբ, անմեկնելի բառախաղերով, հսկայական օգտագործված գրականությամբ, բարդ ու ներդաշնակ գիտական ոճով, կառուցվածքով, ակադեմիական խստակ համակարգով, հայ և օտար հեղինակների, աղբյուրների, երևույթների, գիտական կառույցների հմուտ քննմամբ, մեկնմամբ, արժեքաբանմամբ, անպարփակ, հրատապ խնդիրների ցուցմամբ, նյութամատուցմամբ՝ իրերի ու սխտեմների աշխարհների քննողականությամբ, էսթետիկական, էթիկական, քննադատական, գրական-գեղարվեստական, քննական, փիլիսոփայական, պատմական, հոգեվերլուծական, աշխարհագրական, բանահյուսական, արվեստի, մշակույթի, արեւտական, պոետիկայի ու բազմապիսի գիտությունների սինխրոնիկ ցուցմամբ, մեկնաբանմամբ, գնահատմամբ, միմիայն հերմենևտիկ (մեկնաբանական) և աքսիոլոգիական (արժեքաբանական) քննօղակների ցուցմամբ, գիտականության կառույցներում նյութի մատուցմամբ՝ անդիմադրելի փաստարկումների հեղեղով, երևույթների ճշգրիտ, տիեզերական զննմամբ, նյութերի անպարփակ ցուցմամբ, հիպոթեզների, անալոգների, օրենքների, գրական ու փիլիսոփայական, պատմական և այլևայլ ուղղությունների, դպրոցների մեկնմամբ... ազգային, փիլիսոփայական, էթնիկ արքետիպի վերհանմամբ ու... հզոր, ինտելեկտուալ մտախառնվածքի (մենթալիտետի) պոռթկումների, ստացվածքների, անմեկնելին մեկնելի տեսնելու ներքին հսկայական ներուժով, բառաբարդությունների անմեկնելիությամբ, արգախցու ֆենոմենի շռայլ դրսևորմամբ, նույն տիեզերական հազարադեմ մեկնություններով, նույնքան հրավառ դեգերումները աստվածային, անվերծանելի «Նարեկ»-ի բանքերի միստիկական, գիտական, բնազանցական, քերթողական հղումների մոտեցում- հեռացումներով, ամենավեհին՝ խոնարհումով...

Մի այլ չորաշարկված՝ Աեեղ Դատաստանի վերաբերյալ Գր. Նարեկացու ամենամատյանի խարխլին աղերսող Սարինյանը գնում է, մեկնության. «Եւ, այնասամենայնիվ, անվերծանելին, քանզի

տակավին թարգմանված չէ նրա լեզվի միֆոլոգիական արխետիպերը, «Բան» միավորների տարրնթերցումը, որոնցից յուրաքանչյուրը մի բանաստեղծություն է, մի պոեմ եւ ամբողջի միասնությամբ հյուսվում է դարերի անցումը մթագնող Ահեղ Դատաստանի տիեզերական ռեքվիեմը.

Գոհաբանությամբ աղաչում եմ քեզ՝
Առ վշտահարիս հզոր թեւերից պաշտպանության տակ,
Փրկիր ներխուժող խառնամբոխ պղտոր այս ցնորքներից,
Մաքրիր լիովին զգայարանը արտիս անձնության
(Բան ՂԱ):

Եւ նորից ու դարձյալ անվերծանելին, քանզի Նարեկացու աղերսը Աստծուն՝ «ակատծս դու հասցրու ավարտին» տակավին մնում է անկատար: 2003»[11]

Հարկավ, այսպես կբնի միմիայն տաղանդավոր քերթողը, իմաստասերը, քննադատը, փիլիսոփան…

## Ամփոփում

Քննախոսությունում մասնակիորեն փորձել ենք վեր հանել գրաքննադատ, գրականության պատմաբան, գրականագետ, գրականության փիլիսոփա, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Ն. Սարինյանի գիտական քննահամակարգը՝ ստեղծագործության սեռաժանրային տարբերակումները, մտախառնվածքի /մենթալիտետի/ շերտերը, գիտական ոճը, մեթոդաբանական քննումները, ուսումնասիրությունների բնույթը, սկզբունքների նորարարական առանձնահատկությունները՝ կապված հայ և ռուս, եվրոպական գրական երկերի վերլուծություններին, գրականագիտական, քաղաքական, քննական, մշակութային մտքի արժեքների մեկնմանը, գնահատմանը: Եվ որ կարևորն է, այդ ամենը գիտնականը կատարել է համադրական ասպեկտներում:

Ներկայացված աշխատանքն ունի արդիական և հրատապ հնչեղություն:

## Резюме

В данном исследовании нами предпринята попытка выявить всю сферу научной деятельности литературного критика, историка литературы, литературоведа, философа литературы, искусствоведа академика Национальной академии РА Сариняна С.Н.: многообразие видов и жанров, прослоек менталитета, научный стиль, методологические исследования, суть исследований, особенности его новшеских начал. Все эти проблемы были рассмотрены и оценены им через призму армянской, русской и европейской художественной литературы, литературоведения посредством анализа идейно-художественных ценностей философов, искусствоведов, политологов, критиков. И, самое главное, все это ученый решает в сопоставительном и сравнительном аспекте. Работа имеет современное и актуальное звучание.

## Ծանոթագրություններ


1. Բելինսկի Վ.Գ., Փիլիսոփայական ընտիր երկեր, 2 հատ., h.1, ՀայՊետհրատ, Ե., 1954, էջ 437:
2. Սարինյան Ս.Ն., Հայոց գրականության երկու դարը, երրորդ գիրք, «Զանգակ-87» hր., Ե., 2002, էջ 630:
3. Նույն տեղում, էջ 563:
4. Սարինյան Ս.Ն., Միրաժներ և ավանդներ, «Սովետական գրող», Ե., 1984, էջ 4-5:
5. Սարինյան Ս.Ն., Հայոց գրականության երկու դարը, երրորդ գիրք , «Զանգակ-97» hր., Ե., 2002, էջ 581:
6. Նույն տեղում, էջ 608:
7. Նույն տեղում, էջ 561:
8. Նույն տեղում, էջ 568:
9. Նույն տեղում, էջ 566:
10. Նույն տեղում, էջ 575:
11. Նույն տեղում, էջ 582:
12. Նույն տեղում, էջ 602:
13. Սարինյան Ս.Ն.,Հայոց գրականության երկու դարը, չորրորդ գիրք, «Տիգրան Մեծ» hր.Ե., 2005, էջ 37: